Արձանագրություն N 2

ՀՀ քննչական կոմիտեի կարիքների համար դիզել գեներատորի ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀ ՔԿ ԷԱՃԱՊՁԲ-ԴԳ-25/1 ծածկագրով գնման ընթացակարգի /այսուհետ նաև՝ Ընթացակարգ/ գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Երևան,Մամիկոնյանց 46/5

25 սեպտեմբերի 2025թ.
ժամը՝ 12:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Վ. Խաչատրյան

Հանձնաժողովի անդամներ՝ Գ. Սեփոյան, Լ. Հովակիմյան, Ս. Գարանյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ն. Բաբայան

1. Տեղեկատվություն գնման հայտով սահմանված՝ Ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի գնի վերաբերյալ

Չափաբաժնի համարը	*Չափաբաժնի անվանումը*	*Արպանքի ձեռքբերման համար պլանավորված (կանխատեսվող) գնման ընդհանուր գինը (ՀՀ դրամ)*
1	Դիզել գեներատոր	*0*

2. Տեղեկություն՝ էլեկտրոնային աճուրդի հայտերի բացման և աճուրդը սկսելու վերաբերյալ

Հայտերը բացվել են eauction.armeps.am համակարգի միջոցով /այսուհետ՝ Համակարգ/ 23.09.2025թ.-ին ժամը 12:00-ին:

Էլեկտրոնային աճուրդը սկսվել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրը՝ 24.09.2025թ.-ին ժամը 12:00-ին:

3. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) ըստ չափաբաժինների և հասցեները.

Հ/հ	*Մասնակիցների անվանումները*	*Հասցեներ*
1	Ջի Էյ Թի Քաթինգ ՍՊԸ	ՀՎՀՀ՝ 00866378, ք. Երևան, Բուսաբանական փ., 32/2, info@gat.am, հեռ. 096-20-25-07
2	«ԼՅՈՒ ԱՐՏ» ՍՊԸ	ՀՎՀՀ՝ 03032292, Կոտայք, Հրազդան, Ջրառատ տ.443/2, arisharutyunyan87@gmail.com, հեռ. 077-99-62-77
3	ՍԵՎ-ԱՐՏ ԳՐՈՒՊ ՍՊԸ	ՀՎՀՀ՝ 08626999, ՀՀ, Գեղարքունիքի մարզ, Ճամբարակ, Տերյան փ. 4, sev-art@inbox.ru, հեռ. 095-91-41-31

4. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների նկատմամբ հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ

ՀՀ ՔԿ ԷԱՃԱՊՁԲ-ԴԳ-25/1 ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ «Գնումների մասին» օրենքով (այսուհետ՝ Օրենք) նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների նկատմամբ գնահատող հանձնաժողովի քարտուղարին հիմնավորումներ չեն ներկայացվել:

5. Տեղեկատվություն հրավերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

eauction.armeps.am համակարգի միջոցով հրավերով նախատեսված հարցումներ չեն եղել:

6. Տեղեկություն հակադարձ աճուրդի արդյունքների վերաբերյալ

Չափաբաժնի համար	Գնման առարկայի անվանումը	Ներկայացված հայտեր	Նախահաշվային գին	Նախնական առաջարկ			Վերջին առաջարկ		
				Արժեք	ԱԱՀ	Գին	Արժեք	ԱԱՀ	Գին
1	Դիզել գեներատոր	Ջի Էյ Թի Քաթինգ ՍՊԸ	0	12497000	20 %	14996400	5000000	20 %	6000000.00
		«ԼՅՈՒ ԱՐՏ» ՍՊԸ		6416666	20 %	7699999.2	6031659	20 %	7237990.80
		ՍԵՎ-ԱՐՏ ԳՐՈՒՊ ՍՊԸ		20000000	20 %	24000000	6095828	20 %	7314993.60

Աճուրդն ամփոփվել է 24.09.2025թ.-ին և Համակարգի կողմից

- 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է համարվել **«Ջի Էյ Թի Քաթինգ» ՍՊԸ-ն:**

7. Համակարգի կողմից առաջին տեղ զբաղեցրած մասնակցի ներկայացրած հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության, հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին տվյալներ

7.1 Հանձնաժողովն ուսումնասիրելով մասնակցի ներկայացրած հայտը, արձանագրեց, որ Համակարգի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակից **«Ջի Էյ Թի Քաթինգ» ՍՊԸ-ի** հայտում առկա է անհամապատասխանություն:

7.2 Հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հրապարակված գնումների գործընթացին մասնակելու իրավունք չունեցող մասնակիցներին փոխկապակցված անձանց ցուցակը՝ համաձայն որի **ՀՀ ՔԿ ԷԱՃԱՊՁԲ-ԴԳ-25/1** ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի մասնակից **«Ջի Էյ Թի Քաթինգ» ՍՊԸ-ին** փոխկապակցված անձը /«ՅՈՒՆԻՄԱՅՆ» ՍՊԸ-ն՝ 22.01.2025-22.01.2027թթ. ժամանակահատվածով/ գտնվում է գնումների գործընթացին մասնակելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում և այն, որ **«Ջի Էյ Թի Քաթինգ» ՍՊԸ-ն ՀՀ ՔԿ ԷԱՃԱՊՁԲ-ԴԳ-25/1** ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 1-ին մասի 2.3 կետի համաձայն Հավելված 1 Դիմում-հայտարարությամբ հայտարարել և հավաստել է, որ իր հետ փոխկապակցված անձինք բավարարում են հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին, ուստի՝ ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության և 19-րդ ենթակետի պահանջների համաձայն **«Ջի Էյ Թի Քաթինգ» ՍՊԸ-ի** գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող և այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում:

26.09.2025թ. Հանձնաժողովը որոշեց.

Մերժել առաջին տեղ զբաղեցրած մասնակից **«Ջի Էյ Թի Քաթինգ» ՍՊԸ**-ի հայտը:

7.3 «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն ընթացակարգը հայտարարել չկայացած:

7.4 Հաստատել ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարության տեքստը:

Ընդունվել է որոշում կողմ՝ 4, դեմ՝ 0:

4. Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները

Հանձնաժողովի

նախագահ՝ _____ Վաչիկ Խաչատրյան

անդամներ՝ _____ Գևորգ Սեփոյան

_____ Լուսինե Հովակիմյան

_____ Սիլվա Գարանյան

քարտուղար՝ _____ Նաիրա Բաբայան